«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒԼՏՐԱՁԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԷԱՃԱՊՁԲ-2021/16-2-ԵՊԲՀ >>

ք. Երևան «____» _____ 2021 թ.

«**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր՝ **Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն** ի դեմս տնօրեն **Ա.Մանուկյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9108000 (ինը միլիոն մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող **1-ին չափաբաժնի մասով նախատեսված** ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	**<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցեն՝ ք.Երևան,Լեո-12**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ**
h/h 11500166513800	**Հ/Հ 163008142792**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 02205001**
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**էլ.Փոստ՝medtechservice@mail.ru**
	Հեռ. 010 53-36-30, 53-36-50
	Տնօրեն՝ Ա.Մանուկյան
_____	_____
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.14 17:35:17 AMST

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2021.09.14 15:12:01 GMT+04:00

Հավելված N 1
« » 2021 թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2021/16-2-ԵՊԲՀ
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը*	Տեխնիկական բնութագիրը
1	33111360/1	1 Սրտացիոնար ուլտրաձայնային սարք մեկ սեկտորային տվիչով	ClearVue 550, Philips Medical Systems	Սրտացիոնար ուլտրաձայնային լրիվ շարժական սարք, որը ունի 19 դյույմ բարձր հաճախականությամբ մոնիտոր, որի լուծանելիությունը 1280 x 1024 է: Մոնիտորը ամրացված է առանցքի շուրջ պտույտ ապահովող շարժական արմնկի վրա Ուլտրաձայնային սարքը նաև ունի՝ • ԷՍԳ միացման վահանակ (բնիկ) • Ձևափոխվող հաշվետվություններ ռուսերեն լեզվով • Ուլտրաձային սարքի և ծրագրի հատուկ ֆունկցիաներ, որոնք թույլ են տալիս հեռահար տեխնիկական վիճակի ախտորոշում • 4 պտտվող անիվներ՝ յուրաքանչյուր անիվի համար առանձինարգելակներով • 320 ԳԲ կոշտ ներկառուցված հիշողության սկավառակ՝ տվյալները պահպանելու համար • Հարմարկառավարման վահանակ խմբավորված ստեղներով ՝ սկանավորման ռեժիմները ընտրելու, տվյալների ստացման համար • Ռուսիֆիկացված ինտերֆեյս, իսկ ստեղնաշարը պարունակում է նաև ռուսերեն տառերով տպելու հնարավորություն • Ուլտրաձայնային սարքի ամբողջության ռուսերեն ծրագրային ապահովում • Ուլտրաձայնային ճառագայթի թվային լայնաշերտ տեխնոլոգիա և գերհստակ ֆոկուսավորում ՝ ճառագայթի ընդումման պահին դինամիկ ֆոկուսի կարգավորումով, նաև ճառագայթի փոխանցման ժամանակ գերհստակ անընդհատ ֆուկուսավորում: • 2D պատկերների ադապտիվ ավտոմատիկ մշակում ազդանշանի մշակում, արտեֆակտերի և աղմուկներ նվազեցման նպատակով • Ուժեղացման զոնաների քանակը ըստ խորության՝ 8 • Միևնույն պատկերի միաժամանակ ցուցադրում 2D ռեժիմներում՝գունավոր դոպլերային քարտեզավորմամբ • Անատոմիական M- ռեժիմ • Գունավոր M ռեժիմ, նշված ռեժիմում պատկերի գունավորում՝ օգտագործելով տարբեր գունային քարտեզներ • PW – իմպուլս-ալիքային սպեկտրալ դոպլեր՝ անկյունային շեղումով: Նշված ռեժիմում սկանավորման հաճախության ավտոմատ կարգավորում՝ կախված սկանավորման խորությունից: PW ռեժիմում PRF-իմպուլսի շարունակական հաճախականությունը՝ 700-29500 Հց, հսկվող ծավալի նվազագույն չափը՝ 0,8 մմ, իսկ հսկվող ծավալի առավելագույն չափը՝ 26,3մմ: PW ռեժիմում չափվող առավելագույն արագությունը 10 մ/վ, իսկ չափվող նվազագույն արագությունը 0,1 սմ/վ • CW - անընդհատ ալիքային դոպլեր՝ անկյունային շեղումով: CW ռեժիմում չափվող մաքսիմալ չափման արագությունը 46,9 մ/վ, իսկ չափվող նվազագույն չափման արագությունը 40 սմ/վ, CW ռեժիմում PRF-իմպուլսի շարունակական հաճախականությունը՝ 1,95-93,7 կՀց: • մեկ կոճակի սեղմումով դոպլեր սպեկտրի ավտոմատացված օպտիմիզացիա: • Դոպլեր սպեկտրի ավտոմատ հաշվարկներ և ուրվագծում իրական ժամանակում: • Արագության գունավոր դոպլեր քարտեզավորում (ԳԴՔ), սկանավորման հաճախականության ավտոմատ կարգավորում սկանավորման խորությունից կախված, գունային քարտեզի ավտոմատ ինվերսիա կախված սկանավորման անկյունից • Էներգետիկ դոպլեր քարտեզավորում (ԷԴՔ), սկանավորման հաճախականության ավտոմատ կարգավորում սկանավորման խորությունից կախված, նշված ռեժիմում հոսքի ուղղության ինֆորմացիա ցուցադրում • Պատկերի միաժամանակ ցուցադրում Բ-ռեժիմում, Բ-ԷԴՔ ռեժիմում, իրական ժամանակում (հետագայում համապատասխան տվիչների գնման դեպքում) • Գունավոր հյուսվածքային դոպլեր քարտեզավորում • Ինֆորմացիայի ցուցադրում B-ռեժիմում, M-ռեժիմում, Dռեժիմում, B/B, B/M, B/ԳԴՔ, B/ԷԴՔ, B/ԳԴՔ/D, B/ԷԴՔ/D ռեժիմներում (հետագայում համապատասխան տվիչների գնման դեպքում) • Տրիպլեքս ռեժիմ • Հյուսվածքային հարմոնիկա • Կադրերի առավելագույն հաճախականությունը՝ 1128 կադր • Զննվող հատվածում ըստ պերիֆերիայի ուլտրաձայնային ճառագայթների հզորությունը ուժեղացնելու տեխնոլոգիա • Ֆոկուսավորման զոնաների առավելագույն քանակը՝ 8 • Պատկերի խոշորացումը իրական ժամանակում 16 անգամ • Պատկերի խոշորացումը ստոպ-կադր ռեժիմում 16 անգամ • 65536 ընդունող-ուղարկող ալիքներ, • դինամիկ տիրույթը՝ 272 դԲ, • Պատկերի արխիվավորման ընթացքում կրկնակի վիզուալիզացիայի ռեժիմի աջակցում երկու բուֆերով, յուրաքանչյուր բուֆերի համար կարդրերի քանակը՝ 600 • Ներկառուցված DVD նվագարկիչ • Մանկական հասակի (30 կգ. և ավել քաշ ունեցող) պացիենտներին մեծահասակի համար նախատեսված սեկտորային տվիչով էխոկարդիոգրաֆիա կատարելու հնարավորություն • Ռեգուրգիտացիայի հոսքի մակերեսի հաշվարկ (PISA) • Ռեգուրգիտացիայի դեպքում արյան հոսքի հաշվարկ • Ռեգուրգիտացիայի դեպքում փականի արդյունավետ բացման հաշվարկ • Ռեգուրգիտացիայի ծավալի

				հաշվարկ ● Ռեգուրգիտացիայի ֆրակցիայի հաշվարկ, եթե փականի անբավարարության ծավալը հայտնի է ● Ջախ փորոքի չափումներ կատարելու ծրագիր (շարքով կամ առանձին) ● Դիսկերի բիպլանային եղանակով արտանետման կոտորակա հաշվարկ (MOD) ● Դիսկերի մոնոպլանային եղանակով ձախ փորոքի հաշվարկ ● Ուլտրաձայնային հետազոտությունների ավտոմատացման ծրագիր: Ստանդարտ ալգորիթմների առկայություն և օգտատիրոջ ալգորիթմների ստեղծում հետևյալ հերթականությամբ՝ Սկանավորման ռեժիմների միջև փոխում, Չափոմների և հաշվարկների կատարում, Անոտացիա տրամադրում, Տվիչների դիրքերի մարկյորներ, Ընթացիք հերթականության ժամանակավոր դադարեցում Ուլտրաձայնային սարքը հագեցված է ● մեկ հատ սեկտորային տվիչով, որը աշխատում է 1-4 ՄՀց բարձր հաճախականությամբ, իսկ նշված տվիչում տարբեր պարամետրերի ընտրության քանակը 45 է: Տվիչի վիզուալիզացիայի խորությունը՝ 30սմ: Ունի ազդանշանի զուգահեռ վերամշակման 2 ճառագայթ: Էլեմենտների կամ մասնիկների քանակը՝ 64, սկանավորման անկյունը՝ 90 աստիճան: Տվիչի քաշը ՝ 700 գրամ: Տվիչը նաև աշխատում է էխոկարդիոգրաֆիկ, տրանսկրանիալ և աբդոմինալ որոշ հետազոտություններ կատարելու համար: Տվիչը աշխատում է հետևյալ ռեժիմներում 2D, M-ռեժիմ, Կենտրոնակա Դոպլերային արյան հոսք. PW. CW, Հույսվածքային հարմոնիկա, Էներգետիկ դոպլերայի արյան հոսք: ● մեկ հատ ԷՍԳ մալուխ՝ ուլտրաձայնային սարքին միացնելու համար: ● մեկ հատ SONY սև-սպիտակ տպիչ ջերմային տպիչ: ● մեկ հատ անհատական համակարգիչ, որի պրոցեսորը - 3 GHz տակտային հաճախականության է, որտեղ տեղադրված է Windows 10. 64 pro ծրագրային փաթեթ, հատուկ ծրագրի առկայություն, որը թույլ է տալիս ուլտրաձայնային սարքում հետազոտության որոշ տվյալներ փոխանցել և ստանալ համակարգչում և պահպանել այն, RAM՝ 8GB, որի գրաֆիկական պրոցեսորը՝ 64, համակարգչի կոստ ստավառակը՝ 500GB ծավալով, մոնիտոր՝ 19" անյունագծով,որի լուծանելիությունը 1600 x 1024 է, մատակարարվում է ստեղնաշարի, մկնիկի, լազերային պրինտերի (տպիչ սարք) հետ միասին: ● մեկ հատ կցված անխափան սնուցման սարք, որը հոսանքի անջատումների ժամանակ ապահովում է ուլտրաձայնային սարքի և անահատական համակարգչի աշխատանքը 5 րոպեների ընթացքում: ● Ուլտրաձայնային սարքը հետագայում հնարավորություն ունի միացնել նաև "մատիտ" տեսակի տվիչին՝ մշտական ալիքային և իմպուլսալիքային դոպլերային սպեկտրի դիտարկման համար: ● Ուլտրաձայնային սարքի հավելյալ տեխնիկական տվյալներ Էլեկտրաէներգիայի սպառում 300Վտ Առավելագույն բարձրությունը 1670մմ (+/-30մմ) Նվազագույն բարձրությունը 1180մմ (+/-20մմ) Լայնությունը 540մմ (+/-30մմ) Խորությունը 590մմ (+/-10մմ) Լարումը՝ 220 Վ / 50 Հց Քաշ՝ 58 կգ ● Ունի համապատասխանության սերտիֆիկատներ՝ ISO 13485, ISO 9001 ● Նոր է և չօգտագործված ● Առաջարկի արժեքի մեջ ներառված են՝ տեղադրումը, մոնտաժը, կարգավորումները, երաշխիքային ժամկետը տեղադրման պահից՝ 12 ամիս: ● Մատակարարի կողմից տրվում է 12 ամիս երաշխիքային սպասարկում, ինչպես նաև սարքի տեղադրում, ուսուցում և տեխնիկական սպասարկում, անհատական համակարգչի միացումը ուլտրաձայնային սարքին՝ Ուլտրաձայնային սարքից դեպի համակարգիչ որոշ հետազոտության տվյալների փոխանցման համար: ● Տեղադրելուց հետո սարքը բերվում է աշխատանքային վիճակի: ● Ապրանքը թուրքական արտադրության չէ:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.14 17:35:42 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան,Լեո-12
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Էլ.Փոստ՝medtechservice@mail.ru
Հեռ. 010 53-36-30, 53-36-50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2021.09.14 15:12:25 GMT+04:00

Հավելված N 2
« » 2021 թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2021/16-2-ԵՊԲՀ
ծածկագրով պայմանագրի

*ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ապրանքի							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավորը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատակարարման		
					Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը**
1	հատ	9108000	9108000	1	ք. Երևան Աբովյան 60	1	Պայմանագիր կնքելու օրվանից հաշված 90 օրացույցային օրում

** Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.14 17:36:05 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան,Լեո-12
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Էլ.Փոստ՝medtechservice@mail.ru
Հեռ. 010 53-36-30, 53-36-50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2021.09.14 15:12:48 GMT+04:00

Հավելված N 3
« » 2021 թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2021/16-2-ԵՊԲՀ
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33111360/1	1 Ստացիոնար ուլտրաձայնային սարք մեկ սեկտորային փվիչով	0	0	0	0	0	0	0	0	0	9108000	9108000	9108000	9108000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.09.14 17:36:23 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան,Լեռ-12
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163008142792
ՀՎՀՀ 02205001
Էլ.Փոստ՝medtechservice@mail.ru
Հեռ. 010 53-36-30, 53-36-50
Տնօրեն՝ Ա.Մանուկյան

(ստորագրությունը)
Կ.Տ /ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2021.09.14 15:24:16 GMT+04:00

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «___»«_____» 20____թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն